



## 4. ՈՒՍԱ ՄՈՒՐԱՏ

Մեկ պառավմ՝ հինքն էր մեջ աշխարհիմ՝ մեկ տղա: Եղ տղեն էլա՝ գիշերվա մեկին բուղա խմեց մեկ թագավորի աղջկա խետ, խըլուսուն որ զարթավ, ասաց. - Մարե՛, հա՛ էս տունը քեզի, ես թարկը դունյա կէղիմ ու կէրթամ:

- Տղա, - ասաց մեր, - վերև Աստված, ներքև իմ ումուտ դու ես, դո՞՞ր կէրթաս:

Մերն լալով ասաց ու տղեն ինք դուս ընկավ, էլ չկայնավ:

Հա՛տ զնաց, քիչ զնաց՝ Աստված գիտա, խանողիպավ մեկ քառյիմ մեջ: Եղ էն քաղաքն էր, ինչ որ եղ տղեն էն աղջկե բուղեն խմեր էր: Տղեն էր, եղ քաղյի մեջ պտուտց ու զնաց. էկավ ինչ արեց, չկարցավ եղ աղջիկ գտեր էր: Կիրակի օրմ. տղեն մեկ շուշարանտ սարիմ՝ տկով որ կընցեր, աղջիկ փանճարեն նստեր էր, տեսնելու քիմին տղին ճանչցավ, իր սրտի մեջն ասաց. «Ոլլա, էսա էն տղեն ա, ինչ որ ընձի բուղա յա տվե»:

Խանչեց վերևուց. - Տղա՛, տղա՛, մեկ դեսա աչքա:

Տղեն մեկ աչքեց. տղեն էլ աչքելու քիմին ճանչցավ: Աղջիկ էն տեղ մաշուր էղավ, տղին աչքեց, տղեն մաշուր էղավ, աղջկան աչքեց:

Աղջիկն խարցուց. - Տղա՛, ուղիղն ասա, տեղ ունի՞ս գիշերվան ընելու:

- Չե, - ասաց:

- Որ էմալ ա, գնա՛ էսա դիմացի հօղեն, դուռ զար:

Տղեն զնաց, ողոան զանեց. մարդմ էլավ դուս, աղջիկն ասաց. - Եղա տղեն ներս առ, մուղաթ կեցիր:

Եղ մարդն առավ տղեն, մտավ ներս: Թագավորի աղջիկ ինչ կերակուր որ կուտեր, եղ կերակորից տղին ճամբխսց: Քառսուն օր տղեն եղտեղ մնաց: Եղ քառսուն ավուր մեջ ուրիշ թագավորիմ տղա էկավ եղ թագավորի աղջկեն ուզելու: Դու մի ասա աղջկա մեր ծեռաց տկով ջուապ եր ճամբխսը եր եղ թագավորի տղին, էկեր էր: Խանչեց թագավոր աղջկան, թի. - Արի էսա տղեն առ:

- Չեմ առնիր, - ասաց աղջիկ, - հար ո՞ն բերես, չեմ առներ:
- Ըպա ո՞ն կառնիս, անզգա՞մ, - ասաց թագավոր խերսոտ-խերսոտ:
- Իմ առած տղեն կո էսա հողի մեջն ա, - ասաց աղջիկ:

Թագավոր ասաց. գացին, տղեն առան, էկան:

Եղ տղեն որ բերեցին թագավորի հառեց, թագավորն աղջկեն ասաց. - Աղջի՛, էսի թո՛րկ:

- Իմն օր կա՝ էսա տղեն ա, իմն օր չկա՝ էսա տղեն ա:

Եղ տեղեն տղեն դուս մլեցին. մեկ քառսուն օր, քառսուն գիշեր է, եղ քառդի մեջ կնիկ չմնաց, մարդ չմնաց. Եղ աղջկան քարոզեցին, մուլուն չեղավ:

Թագավորի սուլթանն ասաց. - Խանչեց ծծում խեծնող պառավ, թըլս գա:

Պառավ խանչին, բերեցին թագավորի կնկա հառեց:

Կնիկն ասաց. - Պառավ, կուզեմ քեզնե էսա բան շինես. խոսքն դու խասկեցուցես իմ աղջկեն:

- Սուլթան խանմ, - ասաց պառավ, - Ես ի՞նչ խոսք խասկեցուցեմ քո աղջկեն, քո աղջիկ սեր ու սավտայա յա կապե. Էլ կէ՞ղի որ տղից ջոկվի:

Գլոխ չցավցուցեմ. պառավն էլ չկարաց աղջկեն խոսքն խասկեցուցեր էր. չարեն կտրավ, էկավ զնաց թագավորի մոտ, ասաց. - Թագավոր ապրած, դու ինչի՞ ես մտեր բեռան տակ. տղեն ա, մոտեն բան մ' ուզա, ճամբխսա, զատանց տեղ, էրթա, կորուսի, չիգա, քու աղջիկն էլ ումուտ կը կտրա, կառնի մեկ ուրիշմ, կը պրժի:

- Ես ի՞նչ ուզեմ, պառավ, որ տղեն էրթա կորուսի, չիգա:

- Բիթուն աշխորքի վերջ, - ասաց պառավ, - խոսող մարմառ քար կա, էն քար կու զրուցա, ինչ խտար մարդ որ գացե էն քարի հետև՝ սաղ չդարձեր ա, ճամբխսա, բալթի էրթա, կորուսի:

Թագավոր խանչեց տղին, ասաց. - Գնա, աշխորքի վերջ խոսող մարմառ քար կա, էն քարերուց բեր, քոշը ու սարե մ' շինեմ. նոր աղջիկ կուտամ քեզի:

Տղեն դուս էլավ գնաց աղջկե հօդի պատի տակ նստավ, էլաց: Աղջկկ գլխս փանճարից խանեց. ասաց. - Տղա, ինչի՞ նստեր ես, կուլաս:

- Թագավոր մարմառ քար կուզա. ես էրթամ, ի՞նչ ստ բերեմ:
- Մի լար, - ասաց աղջկ, - էլի, գնա քո հօդեն, Աստված ողորմած ա:

Ասելու քիմին տղեն էլավ գնաց, մտավ հօդի մեջ: Տղեն քնավ. գիշերվան մեջ էրազ էկավ տղին, ասաց. «Յորն օր ճամբախ կէրթաս, յորն օր որ կը բմի, սիվտակ մուրուս խալիվորիմ կը հանդիպես. էնի ճամբխու վրեն նստուկ ա, էնի քեզ կասա իմալ էրթաս, իմալ չէրթաս»:

Տղեն իմցավ որ էրազ էր. դարձավ էլման պարկավ քնավ: Բարի լուսն որ բացվավ վըր ճաղամաթին, տղեն էլավ, ընկավ ճամբախ: Յորն օր որ թմավ, գնաց դեմ էրազ էն խալիվորուն. - Բարի լուս, - ասաց, - պապե:

- Ասու բարին, տղա, դո՞ր կէրթաս:
- Թագավոր դրեր ա վըր ընծիկ, խոսող մարմառ քար կուզա, ես ի՞նալ էրթամ, ի՞նալ բերեմ. բաւթիմ ճամբախմ դոր խանես, պապե ջան:

- Երոր էնալ ա, տղա լառ, կէրթաս ծովու պօռուկ ջոջ քարմ' կա, էն բարի տակ խրեղեն ծիու գյան կա, էն գյան կը խանես, կը զանես ծովու մեջ, խրեղեն ծիմ' կէլի, կը խեծիս: Էն քարի տակ մեկ խատ էլ սանտր կա, մեկ հեսան, մեկ խատ էկ արժիլ: Դեսան թալիս, գետին կէղի սատա քար, որ ջերյան մեջ չկանար պտոտեր. արժին թալիս՝ դուրան կը կտրի ծով. էն սանտր որ թալիս՝ կէղի տատաշ փուշ. էն քո հետև ընկնող քեզի չկանա խասիր էլ: Դեմ կէրթաս, մարմառ քարի վրեն կը կայնիս. մեկ կտոր կտրելու քիմին, քարեր ուրանց-ուրանց կը կտրվին ու կընկնին քո հետևե, չում թագավորի սարեն. հըմա՞ տղա, լառ, չվախենաս, էնտեղ քո հետևեն կրոռան, թի՝ «Դայ-հայ, մարմառ քար տարավ խողածին», չէղի հետևանց աչքիս, օր աչքելու քիմին կէղիս քար, չէղի աչքիս: Էն տեղացեն քար որ առար, էկար. կէրթաս էլման էն ջոջ քարի քով, գյան ծիու գլխուց կը խանես, խրեղեն ծին կէրթա ծովու մեջ, գյան կը խորես քարի տակ, կէրթաս քո բանին:

Խալիվորն օր տղին թարիֆ էրաց, տղեն առավ ճամբախն ու գնաց: Գնաց խասավ էն քարի կուշտ. գյան քարի տկեն խանեց. զարկեց ծովու մեջ, խրեղեն ծիմ' էլավ դուս. էկավ էր քարի մոտ կայնավ, առավ զիսան, առավ զարժին, առավ սանտր, խեծավ ծին ու դեմ էրեց մարմառ քարն ու էկավ: Շատ գնաց, քիչ գնաց՝ Աստված գիտա, խասավ էն մարմառ քարի քով, կայնավ, զարկեց, կտորմ' քար կտրեց խընց չախմիքարմ' դրեց ծոցն ու զանեց ծիու բերան, դարձավ: Բարեր ուրանց-ուրանց կտրվան ու ընկան տղի հետևանց: Սարեր, քարեր, դաշտեր բռոացին, խժացին «Դայ», խողածին մարմառ քար տարավ' ու տարավ': Ասել քիմի, էր քարի տեր

պառավմ՝ կեր, խեծավ ձօումն, օճն էրաց չպուէս, առավ ձեռ ու ընկավ տղի հետև: Տղեն հեսան թալեց հետևանց, եդ կային դաշտն կտրավ սար ու ծոր ու քար: Պառավ սար ու ծոր ընցավ:

- Տղա, - ասաց, - իմ ծեռեն դո՞ր պտի պրծիս:

Տղեն թալեց սանտր, թալելու քիմին՝ եղավ տատաշ ու փուշ: Պառավ էլման պյոժնելանց էր, տղեն թալեց զարծին՝ դուրան կտրավ ծով, պառավ խեծավ ձօում, տվեց վըր ծովու վերեն. խասավ ծովու կես, պառավ էղտեղ պատոավ:

Տղեն դարձավ, էկավ էն քարի տեղ, ինչոր գյամ տկեն խաներ էր. գյամ ծիու գլխուց խանեց, ծին գնաց ծովու մեջ. գյամ խորեց քարի տակ ու առավ քարն էկավ:

Տղեն բերեց քար, դրեց թագավորի սարի հառեց, քարերու կտոր-տանք դրո ընկուկ ճանբախ կուգեն, էկան թագավորի սարի կուշտ, իրուր վրա դիմիրվան:

Թագավոր խանչեց սերմի պառվուն, ասաց. - Պառավ, տղեն էկավ, ի՞նալ էնենք:

- Ինալ պտի էնես, - ասաց պառավ, - ճամբխա անմահական խնձորի, էրբա, էլ չիգա:

Թագավոր խանչեց տղին, ասաց. - Տղա, անմախական խնձոր պտի բերես, չուր չընրես, աղջիկ չեմ իտար:

Տղեն գենա դուս էլավ, գնաց, աղջկա հօդի պատի տակ նստավ, էլաց:

Աղջիկ գենա սիրու տվեց տղին. տղեն գնաց պարկավ: Քնավ, էրգի մեջ տղի էկան, ասեցին. «Լուսուն կը խանչես քո Աստված, կէլիս կէրբաս. Խաթրչու ծոր կա, էն ծորու մեջ քարմ կա, էն քարի մոտ մուղարե մ' կա, սաքսան ուր նարտիվան կիջիս ցածր, էնտեղացեն կը բռոաս, բռոալու քիմին մեկ գազանմ կուգա, չը վախենաս, գազան քեզի բան չի ասա, քեզի կը խասուց անմախական խնձորին, կառնես, կուգաս»:

Տղեն խըլսուն որ լուսցավ, ընկավ ճամբախ ու գնաց: Շատ ու քիչ գնաց, Աստված գիտա, գնաց եդ խաթրչու ծորու մոտ, էն ջոց քարի կուշտ կայնավ, տեսավ որ մուղարի դուր դադիկ էր. տղեն խանչեց Աստված ու մտավ եդ մուղարի մեջ. եդ սաքսան ուր թարանճեն իջավ, իջնելու քիմին յոր գլխեն գազան էլավ առեց.

- Չա՞ - ասաց, - խե՞ր ա, տղա՞, դո՞ւ էս տեղրանք:

- Խե՞ր ու շար խառվե իրար, - ասաց տղեն, - իմ թագավոր ծիկ ճամբխեր ա, մեկ խատ անմախական խնձոր կուգա:

- Յա՞յ քու ճամբխողի աչքեր քոռնա, - ասաց գազան, - դու էսա քար իկիր տղեն, դու ի՞նալ ընկար էս վերքեր, յա պրժիս, յա չը պրժիս. դ'արի, լառ, դ'արի վըր գլխուս, տեսնենք վըր քո բախտին:

Գազան որ տղին առավ վըր գլխուն, բռոաց կարմիր խոչուն: Կարմիր խոչ մեկ սիհաթվան մի ճամբախ զատանց բռոաց. - Ի՞նչ ա, ըսեց, - ազատո՞ղ գազան:

- Կարմիր խոչ, մուլսքամ պախսա' քեզի. Էսա տղեն կը թալեն քամկիդ, դու էլ խասուցա սև խոչու քամկին:

Ասաց ու թալեց:

Տղեն ընկավ կարմիր խոչու քամկի վերեն, կարմիր խոչ թալեց սև խոչու քամկին, տղեն ընկավ մութ աշխարի:

- Աչքերդ խփո՞ւ, - ասաց սև խոչ:

Տղեն աչքեր խփուց: Սև խոչն էլ թալեց սիվտակ խոչուն. տղեն ընկավ լուս աշխարի:

Սիվտակ խոչ խարցուց տղից. - Տղա՛, դո՞ր կերթաս:

- Յա՞յ քու ճամբխողի աչքեր քոռնա: Տղա՛ լառ, քեզի մուլսքամ պախսա, որ քեզի շատ զատանց կը թալեն. ճամբխու վերեն ջոջ ծորմ կա, իլին ջուր ա, թի ես յան ընկար, զարի կը կուրիսիս, թի են յան ընկար, կընկիս լուս աշխարի. Կերթաս քո անճախսական խնձոր կառնես, կը դառնաս, որ դարձար, էկար, էնտեղ ջոջ քարմ կա, կուզաս են քարի կուշտ, կը կայնես. ազնահուրի խավը հմեն ժում են քարի վերեն նստած ա, որ խավքուն տեսար, գլոխ կիջուցես, կը խնդրվիս քովեն, են քեզի կը խասուցա իմ քամկին:

Ասաց ու թալեց սիվտակ խոչ. տղեն զնաց ընկավ ծորով էնտեղ-լուս աշխարի: Տղի աչքեր որ բացվավ, պտոտավ, զնաց մեկ խատ անճախսական խնձոր քաղեց ու դարձավ, էկավ են ջոջ քարի կուշտ, ազնահուրի խավը դայիկ էր. տղեն գլոխ իջուցեց, խավքն ասաց. - Խողածին, խավք ուր թևով, օճն ուր պորտով, էսա տեղյանք չկաներ գեր, դու ի՞նալ էկար:

Տղեն ասաց. - Սապիշի տուն Աստված ավիրա, որ ընծիկ ընկըցուցեր ա դայիկ, քեզնե կը խնդրեն, ազնահուր խավք, որ ծիկ խասուցես սիվտակ խոչու քամկին:

Ազնահուրի խավք տղեն առավ վըր թևերուն, քերեց, դրեց սիվտակ խոչու քամկին. սիվտակ խոչ թալեց սև խոչուն, սև խոչ թալեց կարմիր խոչուն, կարմիր խոչ թալեց զազանի գլխուն, զազան էլ տղին խասուց սաքսան ուր թարանձին: Տղեն դուս էկավ եր տեղեն ու էկավ խասավ թագավորի սարեն, տարա՛վ անճախսական խնձոր, դրեց թագավորի հանեց:

Թագավոր որ տեսավ, զարմացք մնաց, ասաց. - Խանչեք հիգա պառվուն:

Պառավ գտան, թերեցին. թագավորն ասաց. - Պառավ, քու տուն քանդիվ, տղեն էլման էկավ:

- Բան չկա, - ասաց պառավ, - ուսքա Մուրատ էսա ութ խարիր տարի մեռեր ա. դըխ երթա ուսքա Մուրատին գտի, թերա որ քու քոշք ու սարեք շինա, նոր քո աղջիկ տուր:

Թագավոր խանչեց տղին, ասաց. - Տղա, քեզնե կուզեմ ուսքա Մուրատ թերես, որ էսա քոշք ու սարեք շինա, նոր աղջիկ տամ քեզի:

Տղեն էլման էլավ, գնաց. աղջկե փանճարի տակ էլավ, աղջիկ գլոխ փանճարից խանեց դուս. սիրտ էտուր տղին, տղեն գնաց էլման պարկավ, քնավ: Երգի մեջ էկան, ասեցին. «Տղա», ուսքա Մուրատ էնու գերեզման Զանճրլու սարի գլոխ. քառսուն գերեզմներու մեջ խորուկ ա, էնոր վրևու քար կարմիր քարմ՝ ա. էն քար որ շրջեցիր. էնոր դոշի վրեն ուրիշ քարմ՝ էլ կա, էն քարի վերեն գրուկ ա. էնոր խաճըներ թի որ տեղ խորուկ ա. փորես, գէն քար կը խանես. էն գրերու մեջ սիվտակ գիրմ կա, էն սիվտակ գիրն որ բլուցես, ուսքա Մուրատ կէլի, նստի, հըմա չվախսնաս. էնտեղ քու խետ կէլի կուզա»:

Խըլըսուն շուտ տղեն էլավ, ընկավ ճամբախ ու գնաց: Շատ գնաց, քիչ գնաց՝ Աստված գիտա, խասավ Զանճրլու սարի գլոխ. Մուրատի գերեզմնի վրեն կայնավ, կարմիր քար շրջեց մեկ յան, փորեց, գէն քար խանեց, սիվտակ գրեր բլուց. ուսքա Մուրատ աչքեր ճմոնելին էլավ, նստավ:

- Յեյվահս, - ասաց, - էս ինչ խնտար քներ եմ ես. տղա ընչի՞ էսա քնից խանեցեր ծի:

- Իմ թագավոր ճամբիսն քո հետեւ, որ գաս, քոշք ու սարեք շինես,- ասաց:

Ուսքա Մուրատ քարի վերևի գիր կարդաց, էլավ առավ զտղեն, գնաց վըր խաճըներուն, կայնավ: Փորեց, խաճըներ խանեց, խարիր տարվան խաճըներ ինչոր մեկ ավուր խորուկ էղնեն. ուրագ զարկեց զուր մեջկապ. տղեն էլ խաճըներ թալեց զուր քամակ ու ընկան ճամբախ. էկա՞ն թագավորի սարեն, էլան դուս: Թագավոր խանչեց պառվուն, ասաց.

- Պառավ, ի՞նալ էնինք, տղեն ուսքա Մուրատն ու հիր խաճըներն էլ առավ էկավ:

- Տեղմ՝ էլ ճամբիսա, - ասաց պառավ, - թի էնի էկավ, ի՞նչ կուզես, ասա: Արարստան՝ որ շոգուր մարդ կխաչի. էնտեղ քառսուն դեվա կա, քառսուն դեվի կուշտ էլ քառսուն դընով ներս մեկ աղջիկ կա, ճամբիսա

ողյուն էն աղջիկ, առնի, գա քեզի, հըմա գիտեմ, երթլու քիմին՝ ոտով գլխով կկորսվի:

Թագավոր խանչեց տոյին ու ասաց. - Տղա, կուզեմ քեզնե, Արարստուն քառուն դեվի կուշտ աղջիկն կա, բերես ընծիկ. նոր իմ աղջիկ խալալ կէնեմ քեզի:

Տղեն դուս էլավ, ուրան-ուրան մեջից, ասաց. «Ես գախում ընծիկ օր ազատող կա, խրեղեն ծին ա»: Դեմ երաց, գնաց, դեմեսդեմ էն քարի մոտ կայնավ: Էն տեղացեն զյամ քարի տկեն խանեց, զարկեց ծովու մեջ. խրեղեն ծին էլավ դուս. տղեն իլաց:

- Տղա, յա՞. ինչի՞ կուլաս, - ասաց ծին:

- Արարստան շոգ ու կրակ. ես ճամրախ չեմ ճանչնա:

- Դէլի, խեծիր իմ քամակ, մկա՞ քեզ կը խասուցեմ:

Տղեն էլավ խեծավ, ծին ասաց. - Տղա՞, թի սևով երթամ վըր իմ քամ-կին կիրիցիս, շոգ ա. ջոի միջով կը տանեն որ խով եղի. հըմա քեզի մուղքամ բռնա. աչքերոդ էլ դայիմ խփու, որ չվախենաս:

Տղեն աչքեր խփուց. խրեղեն ծին խավալամիշ էղավ. ծովերն հըմեն ընցավ, մեկ աչք խփողի խասուց տոյին քառուն դեվի քյավշնի մեջ, իջուց: Տղեն ծին բորկեց էնտեղ, գնաց դեվերու սարի բոլոր պտոտավ, տեսավ, որ դրներ բաց էր, մտավ ներս. աչքեց որ ըռեզզով դեվեք խոյի մեջ քնուկ են. հեռուն և ին դեվեն էլ շենքեց, ընցավ, գնաց մտավ աղջկե յօյի մեջ, տեսավ որ մեկ դեվեն էլ գլոխ դրեր աղջկե չոյի վլեն, քներ ա:

Աղջիկ տոյին որ տեսավ, մազեր փո՛ւշ-փո՛ւշ կայնավ, խարցուց. - Տղա՞, օձն ուր պորտով, խավեն ուր թևով, եսա տեղրանք չէր կանա գա, դու ի՞նալ էկար, քաշվիր, քյանի շուտ ա. էսոնք էսա քառուն օր քնած ա. մացեր ա մեկ սիհաթ, որ հիմնան, քո ջոջ կտոր քո անկանջ կթորկեն.

- Աղջի, - ասաց տղեն, - ես քե հապով եմ էկեր, իմ աչ քե դիպավ քո հերես. դավեսներու ախն իմ սրտեն էլավ. էտա քո ջամալ, քիթ ու բերան, էտա քու աչքերն ու ընքներ, քու խալխալ ծծեր ընծիկ վառեց ու իրիցեց. կուզեն մկա էլ թող էլնեն, ծիկ սպանեն:

- Քաշվիր, խերիք ա ամբաղ-զամբաղ գրուցես, - ասաց աղջիկ:

- Աղջի, ընչի՞ էնալ կէնես, դու խողածին, ես խողածին, ի սեր Ասուն էլմի, ծիկ բալեր եմ քու, ճարմ դու գտիր:

- Ես ի՞նչ ճար էնեմ, մնաց կես սիհաթ, որ դեվեք հիմնան:

Տղեն շատ էլաց էղտեղ: Օր էլաց, եղ աղջկա սրտի մեջ ըռամ ընկավ:

- Տղա, - ասաց, - մնաց տասվերկու դախս որ հիմնան. էսա դավի մուլսի տակ մեկ քալնիսմ կա, կանա՞ս նե շուտով խարձկես:

Տղեն վազավ, խարձկեց. աղջիկն ասաց. - Եսա իմ քամկի հետև դուռմ կա, բաց, մտի էսա օդի մեջ. մկա էսոնք քնուց կէլին վեր, որ հէլան վեր, էն հաօջի քնողն հավալ կէլի, կէրթա. էն որ գնաց. վաղն էլ էն մեկել կէրթա, հմալ սրով օրական մեկ, չուրմ քառսուն օր թմի. ետքն օր էկավ՝ մեկ օր կմնան, էն մեկել օր էլման քոնով կը դառնան, կը զան մկա դու քառսուն օր պտի մնան հօդի մեջ:

Տղեն դուռ փակեց մտավ նե. դավեք քառսուն էլ գլոխ վերցին վեր, էլան նստան: Խաց ուզեցին, աղջիկ խաց բերեց, կերան. էն հաօջի դեվեն էլավ, գնաց: Քառսուն օր թմավ, քառսուն էլ գացին: Աղջիկ խանչեց տղին, ասաց. - Ռեվեք գացին, արե դուս:

Տղեն էկավ, աղջիկն ասաց. - Դու կանաս ծի տանես, որ էկեր ես տանելու, կո հա՛ խլըսուն դեվեք կուզան:

- Աղջի՛, ես ունիմ խրեղեն ծի, կո՞ հա դաշտ կարծա, որ քառսուն օրվան ճամբախ մե օր կու կորու. քեզ կառնեմ քամկիս, աչք բանալ խփուցելուն կը խասուցեմ տեղ:

- Երոր էմալ ա, գնա՛, խրեղեն ծին բեր:

Տղեն գնաց, ծին առավ էկավ. աղջիկ բացեց դեվեսներու հօդեք, խաս-խաս ապրնեներ, անգին քարեր, էրին բեռ, թալին վըր խրեղեն ծիուն, էլան ջխրանց խեժան ու քշեցին: Մեկ աչք թարթոցի թագավորի քյավշնի մեջ խասան: Էդուղ ծիուց իջան:

Զին տղին ասաց. - Զիկ տար իմ տեղ, նոր դարձե. արե՛ք, գացե՛ք:

Տղեն խեժավ, ծին տարավ ծովու պրուկ. գյան խանեց բերնեն, ծին մեկել ասաց. - Տղա, քաշա էրկու խատ մազ իմ պոչեն. ինչ ժամանակին որ նեղ կընկիս, էսա մազեր կուտաս կրակ, ես քեզի կը խասիմ:

Տղեն քաշեց էրկու խատ մազ պոչեն, ծին մտավ մըջ ծովուն. ինք էլ գյան խորեց քարի տակ ու դարձավ: Էկավ, առավ աղջիկ, խասցուց թագավորի սարեն:

Թագավոր որ տեսավ աղջկեն. խելք գլխուց գնաց, ուշքաթափ էլավ, ասաց. - Տղա՛, նոր քո բերած ընծի խալալ, իմ աղջիկն էլ քե, որ գնա՛, քո պատրաստութեն տես:

Չուրմ տղեն էկավ, ուսթա Մուլրատ խոսող մարմառ քարերուց քոշը ու սարեն շիներ՝ պրծեր էր: Խանչեց ուսթա Մուլրատ տղին:

- Տղա՛, լա՛, ծիկ իրեք օր ա մացեր. ես կը մեռիմ, թի ծի շուտով խասուցիր իմ տեղ՝ կազատվիս. որ չխասուցիր, դու էլ խըտ ընծիկ կը մեռիս:

Սերծի պառավ էր խսեն լսեց, գնաց, ծձում խեժավ, օճն էրաց չպուխ. գնաց Զանճըլու սարի տակ. էն Կային դուրան, սեյր էրաց, էրաց ծով: Տղեն ուսթա Մուլրատն առավ, գնաց էր տեղ. ծով օր տեսավ զարմացավ,

ասաց. «Կա ու չկա, սերծի պառավն ա արե, եղ տեղ ծով չկեր»: Դորվեր որ զնաց. ճամբախ չը կարցավ գտեր էր. ուսքա Մուրատի մեռնելու վախրն էլ մացեր էր մեկ սիհաթ, որ պոտի մեռներ, տղեն էլ խետ. խանչեց տղին, ասաց. - Մեկ ճար արա, ծի շուտ խասուր իմ տեղ:

Են տեղացեն տղի միտքն ընկավ խրեղեն ծին, որ մազ էր քաշեր էր. մազն ի կրակ տվեց. խրեղեն ծին էն սիհաթին խասավ, առավ ուսքա Մուրատին քամակ, խաճքներն էլ խետ. տղեն էլ էլավ, խեծավ:

- Աչքերներդ խփուցեք, ասաց ծին, - բացե՛ք:

Խասուց դեմ, ուսքա Մուրատ մտավ ուր տապնի մեջ. մտնել քիմին մեռավ: Տղեն խող տվեց վերեն. քար կործեց վըր դոշին. խաճքներ ուր տեղ խորեց, խեծավ խրեղեն ծին. ընցավ ծով, էկավ ևս տեղաց չոր, իջավ, պագեց խրեղեն ծիու ճակատ, ծին դեն գնաց. տղեն էկավ դըխ թագավորի սարեն:

Դասնելու քիմին, գնաց թագավորի մոտ, ասաց. - Թագավոր ապրած, քեզնե խնդիր կէնեմ որ սերծի պառավ թասլիմ էնես ծիկ:

Տղեն կատղուկ ծիմ գոտավ, պառվու ծամեր կապեց ծիու պոչ. չորս խատ չպուտս զանեց ծիու քամկին:

- Իրիկուն, - ասաց, - քեզնե կուզեմ, որ պառվու ծամեր մինակ խետդ բերես:

Կատղուկ ծին պառվու օսկոներ սըղկըռտեց, ճարտահուրտեք լցեց փոր, փնչփնչալեն պառվու ծամեր պոչեն կախ, դարձավ էկավ:

Նոր տղեն հէլավ, ուր խարսնիսն էրաց. քառսուն օր քառսուն գիշեր դումք ու զուռնա զանին, քեֆ ու ուրախութեն արեցին:

Ուսքա Մուրատի շինած սարեն էլ թագավոր թասլիմ էրաց տղին:

Ենոնք խասան ուրանց մուրազին, ջաղամաթն էլ խասնի ուր մուրազին:

